

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐ. ԶԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Այս գիտցիր, որ վերջին օրերուն պիտի գան չար ժամանակներ, երբ մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, հպարտ, ամբարտաւան, հայհոյող, ծնողաց անհնազանդ, ապերախտ, անմաքուր, անհաճ, անգութ, բանասարկու, անժուժկալ, պնդագլուխ, անբարեսէր, մասնիչ, յանդուգն, անբարեհաճ, աւելի շատ ցանկասէր քան թէ աստուածասէր, մարդիկ՝ որ ունին աստուածպաշտութեան կերպարանք, սակայն ուրացած են անոր զօրութիւնը: Խորէ՛ նաեւ անոնցմէ, քանի որ ասոնց մէջ կան այնպիսիներ՝ որոնք կը մտնեն տունէ տուն եւ գերի կը դարձնեն մեղքերով ծանրաբեռնուած կիները, որոնք տարած են ամէն տեսակ ցանկութիւններէ. մարդիկ՝ որ միշտ կը սուրկին, բայց բնաւ չեն հասնիր նեմարտութեան գիտութեան: Եւ ինչպէս Հանկա եւ Յամբէս հակառակեցան Մովսէսի, այնպէս ալ ասոնք կը հակառակին նեմարտութեան. ապականած մտով մարդիկ, անպէտք՝ հաւաստի մէջ: Բայց ասոնք երբեք չեն կրնար աւելի առաջ երթալ, քանի որ իրենց անմտութիւնը յայտնի պիտի ըլլայ ամենուն, ինչպէս որ եղաւ այդ երկուքինը:

ՅՈՐԴՈՐ ՀԵՏԵԻԵԼՈՒ ԱՌՈՂՋ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Իսկ դուն հետեւեցար իմ վարդապետութեանս, առաջնորդութեանս, կամեցողութեանս, հաւաստիս, այն հալածանքներուն ու չարչարանքներուն, որոնք պատահեցան ինծի Անտիոքի, Իկոնիոնի եւ Լիւստրայի մէջ. ինչպիսի՛ հալածանքներու ենթարկուեցայ, բայց Տէրը ազատեց զիս այդ ամենէն: Եւ բոլոր անոնք՝ որ կ'ուզեն աստուածպաշտութեամբ ապրիլ ի Յիսուս Քրիստոս, հալածանքներու մէջ պիտի ըլլան: Իսկ չար եւ խաբեբայ մարդիկ չարէն անդին ալ պիտի երթան, իրենք մոլորած՝ պիտի մոլորեցնեն ուրիշները: Բայց դուն հաստատ մնայ այն բաներուն մէջ՝ զոր սուրբեցար եւ որոնց հաւատարիմ եղար. զիսեւ թէ որմէ՛ սուրված ես, որովհետեւ մանկութենէդ ի վեր զիսեւ սուրբ Գրուածները, որոնք կրնան իմաստուն դարձնել քեզ փրկութեան համար, ի Քրիստոս Յիսուս եղած հաւաստին միջոցով:

Աստուածաւունջ ամէն Գրուածք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, որպէսզի Աստուծոյ մարդը ըլլայ կատարեալ, ամբացած ամէն բարի գործի համար:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱՆ

Բ. Թուրք առ Տիմոթէոս

Գ. Գլուխ, 1 - 17